

ՎԵՏՏՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Երկրորդ տարածքը բաց է առաջարկում 10—2

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Հայերէան գիրը 7 բառով կէս տարւում 4 բառով:

Թիֆլիսում գրվում են խմբագրություններ, պ. Նախապետի և

Արախանեանի խմբագրություն

Մտաբարարարացիք գիտում են ազգային

Բուֆուս. Բեռնարդ. Բուֆուս

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Մեր հարուստներին պակաս է խղճմանը: — Եւրոպայի առաջնութիւնը: Պատերազմա-
կան ժամանակ: Արեւելքի ժողովուրդը: Նա-
մակ Գորոց: Ներքին լուրեր: Արեւելքի
առաջնութիւնը: Յիշուողագրութիւնը Թիւրքիա-
յում: Գերմանիայի ֆրանսիայի Արտաքին լուրեր:
— Խառն լուրեր: — Յայտարարութիւններ:
— Տեղեկացույց: — Բանասիրական: Թիւրքաց
Հայաստանը:

ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻՆ ՊՈԿԱՍ Է ԽՂՃՄԱՆԻՔԸ

Եւրեկ ձեզ պատահել է լսել այս
տեսակ գաղտնիութիւններ՝ մենք
մեր փրկութիւնը մեր հարուստ-
ներից պէտք է սպասենք, փոխ-
է որ այդ հարուստները թողել են
իրանց հայրենիքը, գաղթել են
Մակկա, Ս. Պետերբուրգ, Ա.
Պոլս կամ մի այլ մայրաքաղաք և
այնտեղ իրանց համար հանգիստ
են ապրում: Ժամանակ առ ժա-
մանակ իրանց ահագին կարողու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՐԻՔՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բելգիական երեկի «Indépendance Belge»
լրագրի 179 համարում կար մի ընդարձակ թըզ-
թակցութիւն Ս. Պետերբուրգից, որը հերքելով
Եւրոպական մամուլի մէջ շատ անգամ յայտնած
այն կարծիքը թէ՛ իբր Ռուսաստանը ներկայ
պատերազմով կամենում է կամ երկիրներ խել
Թիւրքիայից և կամ մի սլաւոնական տէրութիւն
հաստատել Դունայի ափերի վրա, ստում է ի
միջի այլոց հետեւեալը:

«Անպէս, օրինակ, հայերի վերաբերութեամբ,
որոնք չարարվում են թիւրքերի ձեռքից ոչ պա-
կաս քան թէ Բալկանեան սլաւոնները, իս-
տում են թէ իբր Ռուսները կամենում են վերց-
նել այդ երկիրը (Հայաստանը) որ ապագայից
են իրանց ձառնապարհի դէպի Հնդկաստան
ի վտանգ անցկացնելու օգուտները: Կորանից
աւելի միայն ընդ իր Բալկանեան Հա-
յաստանը, քրիստոնէական իշխանով
որը չի լինել մի ճշմարիտ առաջադիմու-
թիւն լուսաւորութեան: Այդ օգուտ-
կար կը լինէր որչափ Ռուսաստանի
համար, նոյնչափ և Անգլիայի համար:
Վերջին տղերքը տեղիք են առնում հեղինա-
կին հետեւեալ խորհրդածութեանը:

Հայոց ազգը անհ հինգ հարիւր տարի է նա-
հատակվում է տաճկական սարսափելի լծի տակ:

Նա բազմաանում է մօտ չորս միլիոն ժողովու-
րդի:

Նա նստած է իւր սեփական նախնեաց արեւ-
նով պաշտպանած երկրի վրա:

Նա խիստ աշխատասէր և ընտիր երկրագործ
ազգ է:

Նա խիստ ընդունակ է արուեստագիտութեան
և վաճառականութեան:

Նա ընդունակ է նոյնպէս քաղաքական բարձր
գործերի կառավարութեան, որի ապացոյց են
բազմաթիւ բարձրաստիճան հայ պաշտօնեա-

թիւն աննշան փղանքները զցե-
լով ազգին և այսպիսով էժան
գնով բարերարների անուն ժա-
ռանգելով ազգի մէջ....

Իսկ մենք համարել ենք միշտ
մեր հարուստների կեանքը վերին
աւտիճանի ետական, նրանց գոյու-
թիւնը համարել ենք ոչ թէ միայն
ապարդիւն ազգի համար, բայց և
ֆնասական:

Մեր համայնքների ճիշդ լինե-
լու ամենալուս ապացոյցը մեր հա-
րուստների այժմեան անտարբեր
վարմունքն է, նրանց ապարդիւն,
անտիրտ յարաբերութիւնն է դէպի
ազգի ցաւերը, այնպիսի կրիտի-
կական, ծանր քաղեում: Երբ մեր
ազգը գուցէ մահվան և կեանքի
կուռի մէջ է գտնվում:

Մենք շատ անգամ կրկնեցինք
որ մեզ, հայերիս, Եւրոպային
յայտնի անելու համար, մեր գրու-
թիւնը, մեր ինչ լինելը, մեր գե-

յութիւնը, մեր պահանջներն ու
ցաւերը լուսաւորված աշխարհի
առջև պարզ պատկերացնելու հա-
մար, — մեզ հարկաւոր է որքան
կարելի է շատ մեր մասին գրել,
մեզ հարկաւոր է մի որ և է եւ-
րոպական լեզուով մի օրգան, մի
քաղաքական թերթ ունենալ:

Այդ էր պատճառը որ մենք
անդադար այն համոզմունք էինք
յայտնում, թէ մեզ համար աւելի
օգտուէտ կը լինէր Ռուսաստանի
մայրաքաղաքներից միում մի ուս-
սաց օրգան մեր ձեռքում ունենալ,
քան թէ մտածել հիմնել այնտեղ
մի հայոց ամսագիր....

Մեր երկիրներում՝ Կովկա-
սում, Անդրկովկասում և Հայաս-
տանում հարկաւոր է տեղական
լեզուներով լրագիրներ հրատարա-
կել դատարարական ազդեցու-
թիւն ժողովրդի վրա ունենալու
համար, — իսկ Ռուսաստանի մայ-

րաքաղաքներում մեզ հարկաւոր է
մեր ձեռքում ուսուսաց մի օրգան
ունենալ: Եթէ ընդունակ չենք
ինքներս մի լրագիր հիմնելու, գոնե
եղած լրագիրներից միւր մեր ձեռ-
քը տանելնք:

Եթէ մեր հարուստները այդ
տեսակ ծանր, ինչպէս ասացինք,
հայոց ազգի համար կրիտիկական
քաղեում ոչինչ չեն անում, — էլ
ի՞նչ կարելի է սպասել նրանցից
ուրիշ ժամանակներում:

Այժմ պարզ երեւում է որքան
ապարդիւն է նրանց գոյութիւնը
մեր ազգի համար.... Ո՛ր է նրանց
զոված ազգասիրութիւնը, նրանց
խելքը, նրանց խղճմանքը:

Դատարարակէ մենք ինքներս
մեզ կարող ենք: Մենք ունենք
մեր սեփական, տեղական մամուլ,
որ քանի կերթայ՝ աւելի և աւելի
կը վարդանայ, մենք հարկաւորու-
թիւն չունենք մի որ և է հայոց

ները՝ Ռուսաստանում, հաճախատում և Պարս-
կաստանում:

Նա ընդունակ է նոյնպէս գիտութեան ծան-
րակշիւ գործերին, որի ապացոյց են բազմաթիւ
երեկոյն հայ զօրագետներ և գնդապետներ նոյն
երեք տէրութեանց մէջ:

Նա ընդունակ է նոյնպէս ֆինանսական (գրա-
մական) մեծ հաշիւներին, որի ապացոյց են բազ-
մաթիւ հարուստ հայերը, վաճառականները,
բանկիրները, և նոյն խիստ ընդարձակ գործերը:
Նա ընդունակ է նոյնպէս բարձր գիտութեան,
որի ապացոյց են գիտնական Եւրոպայում անուն
ստացած հայ ուսումնականները:

Նա ընդունակ է նոյնպէս ընդհանուր լուսա-
ւորութեան, որի ապացոյց են ազգային նոր մա-
տենագործիւնը և մասնաւոր լրագրութիւնը,
ազգային բազմաթիւ ուսումնարանները և նոյն-
պէս բազմաթիւ ուսանողները Եւրոպայի բարձր
ուսումնարաններում:

Նա ունի հարուստ և կատարելագործութեան
ընդունակ նոր լեզու:

Նա ունի ինչ գաղական լեզու և գիտական
արժանաւորութիւն ունեցող գրականութիւն:

Նա ունի նաղաբան քրիստոնէական կրօն:
Նա ունի բոլորովին անկախ ազգային եկե-
ղեցի և ընդհանուր Հայրապետ:

Նա ունի վերջապէս փառաւոր անցեալ և
փառաւոր պատմութիւն:

Այժմ քաղաքական հայոց ազգը ուրիշ իր նման
ազգերի հետ՝ սերբիացիներին, չեքոսլոնացիներին,
բուլղարացիներին, և այլն, — ունեն արանք արդեօք
բոլոր վերոյիշեալ յատկութիւնները: Կեցուք թէ
ունենա Ռուսին նոյն բոլորովին հաւատար են
հայոց ազգի հետ: Արդ՝ ինչի մի բուռը դարա-
դապիք (հազիւ 200 հազար), մէկ ու կէս մի-
լիոն չափ սերբիացիք, նոյնպէս տակաւնութիւն
բուլղարացիք կարող են ազատ լինել, իշխան և
ինքնավարութիւն ունենալ, իսկ չորս միլիոնաւոր
հայոց ազգը չը պիտի ունենայ մի և նոյնը:

Բարեբաղտաբար տաճկական Հայաստանի
ազատութեան խնդիրը ներկայ պատերազմի
շնորհով սկսում է աւելի և աւելի ուշադրութիւն
և համակրութիւն գրաւել թէ՛ Եւրոպայում և թէ՛
Ռուսաստանում: Բայց այն բազմաթիւ յօգուտ-
ներէ, որք տպուեցան և տպվում են այս խնդրի
մասին անգլիական, ֆրանսիական և գերմանա-
կան լրագրներում, նոյն իսկ ուսական մամուլը

վերջին ժամանակներում օկոյց աւելի յաճախ
խօսել տաճկական Հայաստանի ազատութեան
վերա:

Բայց ինչ կազմակերպութիւն պիտի ստանայ
ազատ Հայաստանը:

Անհ ինչ կազմակերպութիւն:

Հաճկական Հայաստանը կը կազմէ առանձին
քաղաքական մի մարմին:

Նա կը հատուցանէ Սալթանին որչափ տա-
րեկան հարկ:

Նորա իշխանը կը հաստատուի իր դահլ վրա
Սալթանի ֆերմանով:

Նա կունենայ ռաճմանագրական եզանակ կա-
ռավարութեան:

Նա կը լինի բոլորովին ազատ իր ներքին գոր-
ծերի մէջ:

Նա կունենայ որչափ թուով գործ ներքին
խարկարութեան համար:

Նա կը լինի բոլորովին չէզոք՝ Ռուսաստանի
հաճկատանի և Պարսկաստանի միարան պաշտ-
պանութեան տակ:

Ո՞ւր համար օգտակար է տաճկական Հայաս-
տանի ազատութիւնը:

Այդ օգտակար է՝

Նախ՝ հայոց ազգի համար, որը վերջապէս
կազատուի դարաւոր նեղութիւններից:

Երկրորդ՝ հաճկատանի համար, որը առանց
զլխացաւութեան կը ստանայ իր հարկը, որը
գուցէ և աւելի շատ կը լինի, քան թէ մանուշ
այժմ տէրութեան գրաւն:

Երրորդ՝ Ռուսաստանի, հաճկատանի և Պարս-
կաստանի համար, որոնք այնուհետ չեն ունե-
նայ պատերազմի պատճառ գոնեա իրանց այդ
ստանաններում:

Չորրորդ՝ Ռուսաստանի և Անգլիայի համար,
որովհետեւ կը վերանայ այնուհետ Հնդկաս-
տանի վերաբերմամբ ունեցած կապածը գոնեա
այդ երկրի միջով և երկու տէրութեան փոխա-
դարձ քաղաքական յարաբերութիւնները կա-
րող են ստանալ աւելի բարեկամական ըն-
թացք:

Ո՞ւր համար վնասակար է տաճկական Հա-
յաստանի ազատութիւնը:

Այդի համար, որովհետեւ հայոց ազգի հա-
ղաւոր և չափաւոր բնասարկութիւնը քաղաքական
գործերի մէջ յայտնի է ամբողջ աշխարհին:

Բայց ինչ կառէ հաճկատանը:

Նա կը համաձայնուի, որովհետեւ նա պար-
տաւոր է վարձատրել վերջապէս հայոց ազգի
բազմադարեան մեծամեծ ծառայութիւնները և
անվերապ հաւատարմութիւնը: Եւ այդ չի լինի
նորա համար շատ նոր բան, վասն զի նա իր
յօժար կամքով արդէն տան և վից տարի առաջ
տուել է իր հաւատարմ հայոց ազգին Սահմանա-
դրութիւն և ինքնավարութիւն: հարկաւոր կը
լինի աւելացնել միայն մի իշխան, երկրի որ-
չափ առանձնական, և այլն:

Իսկ եթէ չը համաձայնուի հաճկատանը:

Այն ժամանակ կարելի է պահանջել նորանից
այդ համաձայնութիւնը, ինչպէս պահանջեցին և
նա տուա Գոնմաստանի, Գարադաղի, Սերբիայի
և Բուլղարիայի համար:

Բայց ո՞վ պիտի կատարէ մի ազգային ազդա-
րացի պահանջ՝ ո՞վ պիտի գոչու բեկէ մի այդ-
պիսի մեծ և եւրոպական համակրութիւն վայե-
լոյ գործ:

Այդ, բայց ուստաց ինքնակալ կայսրից և
Ռուսաստանից, որովհետեւ նախ՝ Ուրբանոս Վա-
սիլը քանից իր հոգը բաղկով իր յաղկոյ տուր
յատկապէս հաճկատանի ճնշում և բազմա-
չաքար քրիստոնէայ ազգերին անխախտ քաղա-
քական ազատութիւն տալու համար, և երկրորդ՝
Ռուսաստանը այնպիսի համակրութիւն, հաւա-
տարմութիւն և բազմաթիւ ծառայութիւններ
ստացել է միայն իր հաւատարմ հայոց ժողովրդից,
որ չի զրանայ մարդասիրաբար փոխադարձ վը-
ճարել նորա արեւմտեցի եղբայր մեծամանու-
թեանը:

Ուրեմն, թող Ռուսաստանի հայերը կրկնա-
պարկեն և տաճկապատին իրանց գոյելի հա-
ւատարմութիւնը և արդիւնաւոր ծառայութիւն-
ները Ռեճմանագրում կայսրի համար, բարե-
մաղթելով լիազօր յաղկութիւն, և Նա իր
Օգոստոսիան խօսքով և հոգը բաղկով չի խնայի
ազատութիւն տալ տաճկական Հայաստանին:

Վ. Բ.

ամնագրի, որ հրատարակվել էր Ռուսաստանի մայրաքաղաքներից միում մեր հարուստների ձեռքով:

Իսկ եթե նրանք կամենում են իրանց փողով մի որ և է օգուտ բերել ազգին, — որովհետև ուրիշ բանով ոչ իրանց խելքով, ոչ էլ իրանց բարոյական ազդեցությամբ ուրիշ ոչինչ օգուտ չեն կարող բերել, — թող հիմնեն իրանց դրամական միջոցներով մի ուսաց ընդհանուր, որ հրատարակվել հայ երիտասարդների խմբագրությամբ, կամ գնեն արդեն եղած ուսա ընդհանրից միսը, որ այդպիսով կը լինել հայոց օգուտների օրդան:

Միայն այդպիսով մեր հարուստները կապացուցանեն մեզ որ իրանց գոյությունը կատարելապես ապարդիւն չէ ազգի համար, որ նրանք դեռ կատարելապես չեն կորցրել իրանց խելքը և խրդմանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Պատմության հետազոտման Ալեքսանդր Գրիգորյանը, յունիս 2-ից, որ գնեցրալ Գեյմանի կոյնի Սոդանյուխի մօտից վերադառնալուց յետոյ, Դարսի ումբակոնութիւնը շարունակում էր մինչև 25 յունիսի: Սուրանից յետոյ տեղեկութիւն ստանալով թէ գրեթէ ամբողջ Մատթոկայի թիւրքաց զօրքը Մուխտար-փաշայի առաջնորդութեամբ ուղևորվում է Սոդանյուխի տարերի շրջանից դէպի Դարս, գնեցրալ-աղբիւսանա Լուխ-Մէլեքով, որպէս զէ աւելի հեշտացնէ զօրքերի ընթացքը Դարսի մօտ, ուղարկեց պաշարական թնդանութիւնը ետեի դէի վրա: Վնեւրալ Տէր-Ղուկասովի զօրքը Բայեարից Սուրբ-Յովհաննէս անցնելով, յանձն առաւ պաշտպանել 3000 թիւրքահայաստակ ջրհատանայ ընտանիքներ, որոնք փախան Ալաշկերտի դաշտավայրից, որտեղ բաշխուած կանգնել և քուրդերը կոտորեցին ամբողջ գիւղերը Այդ հանգամանքը դանդաղացնելով զօրքի շարժումը, թող տուեց թշնամական զօրքերին հետեւ անմիջապէս մեր զօրքի արեւդարդին, անհանգստացնելով նրան: Այդ պատճառով հասնելով Սուրբ-Յովհաննէս, գնեցրալ Տէր-Ղուկասով նախ քան ուղևորվի դէպի Բայազետ, որտեղ նա կարող էր գտնել թշնամուն 20 բառալիսն և 10 հազար հեծելազօրքի քանակութեամբ, նախապատկեց ապահովել հիւանդների, վերադարձաների և գաղթականների վնասը, և այդ պատճառով կրկին յետ կանչելով հեծելազօրքը, որ արդէն ուղարկված էր դէպի Բայազետ, անցաւ Քարվանսարայի անցքով դէպի Իգդիր, որտեղ և հասաւ յունիս 23-ին: Հինգ օրվայ գրեթէ անընդհատ շարունակող հրաձգութիւնների ժամանակ մեր կորուստը այդ զօրքի մէջ եղել է մի վերաւորված օֆիցեր և 30 սպանված և վերաւորված սօլդատներ: Նոյն օրվայ երեկոյան գնեցրալ Տէր-Ղուկասով ուղևորվեց Սրբովից դէպի Բայազետ, որի ուղղութեամբ ուղարկված էր նախընթաց օրը գնեցրալ Քելեպայ-խանի կօյնը: Յունիսի

28-ին գնեցրալ Տէր-Ղուկասով ջարդեց 30 հազարից բաղկացած թիւրքաց զօրքը, որ պաշարում էր Բայազետ, ազատեց մեր գարնիզօնը և վեր առաւ չորս թիւանօթիւնը և 80 գերիներ: Գարնիզօնը դուրս եկաւ Բայազետից, որովհետև ինքն Բայազետը բոլորովին քանդված և աւերակ դարձած թշնամիների ձեռքով, ոչինչ նշանակութիւն չուներ:

ԱՌԽԱԶՆԵՐԻ ՍՈՒԽՈՒՄԻ ԿՈՂՄԸ

Սուխումը ինչպէս որ յայտնի է 1856 թվականից սկսած օրից օր առաջ էր գնում, ծաղկում էր այլ և այլ կողմերից գնացան ազգութեան և դասանութեան պատկանող բախտախնայի գաղթականների գործունեութեամբ, որոնք որ 20 տարուց աւել անխնայապէս թափում էին իրանց տօկուն աշխատութիւնները, գոհելով ամեն միջոց, որ ժամանակով իրանց և կամ գաղց սերնդի համար մի նախանձել ասպաղայ պատրաստեն, ապահով մարդու և համեստ ապրուստ ձարելու նպատակով, համոզուած և լաւ կշռած լինելով, որ ոչ թէ Սուխումը, այլ ամեն մի ծովեզրայ քաղաք մեծ նշանակութիւն ունի, ինչպէս առեւտրական նոյնպէս և երկրագործական և արհեստական կեանք: Ահաւասիկ այդպիսի ձիւղ գաղափար կազմող մարդիկ և ամբողջ ընտանիքներ չը խնայելով ոչինչ թէ Ֆիզիկապէս և թէ ներթափանցապէս, սկսեցին իրանց նպատակը առաջ տանել, այսինքն տնտեսականութեամբ պարտաւր, վաճառականութիւն անել, հողեր մշակել, փառել, ցանել, որ բնութեան տված առատ բերքերը ոչ թէ նահապետական, այլ կանոնաւոր կերպով արդիւնաւորվին և միով բանիւ աշխատել առաջ տանելու այն, որ իրանց նպատակին պէտք է ծառայէր: Եւ պէտք է աւելացնել որ այդ գաղթականութիւն կազմող հասարակութիւնը մեծ եռանդ ունէր, ոգևորված էր մի ուրիշ միտքով: Եւ բաւականացուցիւ հարցի համար ևս այն է՝ թէ տէրութիւնը կամենալով հաստատ կերպով օգնել և բարեկաւայնել Սև ծովի արեւելեան եզրերին գտնուած նոր գաղթականութիւն կազմող ժողովրդին, մտադիր է իրր թէ Սուխումից արդէն սկսուած Մատթապօլ տանող կառքի ճանապարհը շինել տալ, նոյնպէս Նովորոսիսկից և կամ Սուխումից մինչև Նովի-Սէնսը կոչված կայարանը երկաթուղու մի ձիւղ շինել Փոթի-Փիֆլեսեան երկաթուղու դէի հետ միացնելու համար, որ անշուշտ այն ժամանակ տէրութիւնը աւելի հարկաւոր կը համարէր ուղադրութիւն դարձնել յիշեալ երկու քաղաքների մէկի մէջ փառաւոր նուազանգիտ ունեւորու վերա: Նորա երթեկութիւնը և ապրանքների փոխադրութիւնը այն ժամանակ կը հեշտանար: Այդ կողման արդէն մի քանի անձինք պատրաստած պրօեկտներ ներկայացրած էին տէրութեան, որոնց իրադրածան համար հասարակութիւնը մեծ յոյս ունէր: Միով բանիւ, Սուխումը առաւել էր խոտանում իր խաղաղասէր, ընդունակ և գործունեայ բնակիչների համար ժամանակով և քաղաքի ծովեզրայ ծաղկած և վաճառաւոր քաղաքներից մէկին նմանել: Ուստի վաճառականներ և շատ աստիճանաւորներ անգամ ոգևորվելով այդ տեսակ խոտաններից սկսեցին իրանց փողերը առատութեամբ ծախել թէ մեծամեծ շինութիւններ կանգնեցնելու և թէ քաղաքի շրջականերում ահապէն տարածութիւններով հողեր գնելու, այգեգործութիւնը առաջ տանելու և այլն: Բայց դժբաղդապէս, երբ յանկարծ և անպատկեր կերպով յայտնեց այն միտքը, թէ Սուխումն ամբողջ անկողնաւոր հետ ունենալու պատրաստ էր գոցէ անփախելի է, շատ ընտանիքներ, որոնք որ երբեք անկանաւոր էին

երկ անցեալ պատեի աղմկն և 1866 թվականի արեւադեմի ապստամբութեան, ստիպեցան, առանց ժամանակ կորցնելու, թողնելով իրանց ձեռք բերած շարժական թէ անշարժ կարողութիւնները երեսի վերա, գնալ ուրիշ և աւելի ապահով քաղաքներում բնակվելու մինչև լինելու պատերազմի վերջը: Այդ ժամանակից արդէն Սուխումը մի տխուր տեսարան էր ներկայացնում: Մնացող բնակիչների համար, նրա ծովեզրային գտնված փողբիկ բուրձարը, որ կրակի և տոն օրերին լցվում էր գաւառի թեւան համար եկած հասարակութեան ամեն փայլուն պատկանող ընտանիքներով որոնք երաժշտութիւն էին լուծ և հարկաւոր փողբիկ մանուկների մանկական անմեղ խաղերին էին նայում, — այդ ժամանակից ոչք չէր երևում այնտեղ, և ոչ մի անձ գեղեցիկ սեռին պատկանող չէր պատահի: Ով կարող էր յուսալ որ մի ժամանակ այդպիսի խաղաղութիւնը յանկարծ վերածված կերպարանք կը ստանայ: Եւ անեղ լուծիւն էր տիրում, հասարակական կեանքը կարծես թէ մշտնջենաւոր կերպով վերջացել էր Սուխումի համար:

Իսկ հասարակութեան մի մասը մնալով դեռ անշարժ իր տեղում թէպէտ և երեսկայում էր գալու դժբաղդութիւնները, թէպէտ գգում էր, որ իրան շրջապատող լեռնաբնակ կիսաւայրների, երկշտ և վեժ-լինդի 60,000 հոգուց բաղկացած արեւաղաղաբնակութիւնը լինելու պատերազմից օգուտ քաղելով, պէտք է իրան կողոպտէ, այդ և կործանէ ամեն մի բան, բայց այնու ամենայնիւ սրտով կապված իր քրդտիրքով ձեռք բերած կարողութեամբ անբաժան էր մնում մինչև վերջին րօպէս: Այդ վերջին րօպէս հասաւ, և նա ստուգելով տեսաւ, որ իր նախազգուշութեան մէջ բոլորովին սխալված էր: Պատերազմը հրատարակվելու պէս այդ վայրերի հրէշները, (եթէ ներքին է ինձ այսպէս անուանել), արեւադեմի սկսեցին կատարել այն ինչ որ խոտանում էին բացարձակապէս անցեալ տարի Սեբրայի ծածկապատին դեռ նոր յայտնած պատերազմի ժամանակ: Նրանք դեռ այն ժամանակից սկսած պատրաստութիւն էին տեսնում: Սուխումի մէջ գաղտնի կերպով աշխատում էին վառօղ և հրապէներ ձեռք բերելու, իրանց քաղաքի համար ծախու բերած աւտիլները համար փողե տեղ վառօղ էին խնդրում: Արեւապէս նրանք համարձակվում էին բացարձակապէս յայտնել ռաւիկից տաճիկները կը գան ծովից, իսկ մենք լեռներից կը հայտնենք ձեռք և կապտենք մեր հայրենիքը:

Շատ անգամ քանի մի հայ և յոյն մանրավաճառներ, նրանց հետ մօտիկ յարաբերութիւն ունենալով և իմանալով չար դիտաւորութիւնները, աշխատում էին տեղական կառավարութեան ականջը հասցնելու: Եւ ամեն մի անձ նրանց նկատաւոր կենդանաւորութեան հետ ծանօթ լինելով բողբում էր վաղօրօք քաղաքի մէջ թէ մենք բոլոր բնակիչները լինելու պատերազմի ժամանակ պէտք է երկու կրնք մեր սեփականութեան և կեանքի համար թշնամի տաճիկներից, որքան որ մեզ շրջապատող արեւադեմից, բայց ոչ զք չէր հաւատում, կարծելով որ նրանք միշտ հաւատարիմ հպատակներ կը մնան: Բայց ավետա, սխալվեցին այդպիսի կարծիք ունեցողները, սրովհետև մի և նոյն հաւատարիմ և անձուներ կարծեցեալ արեւադեմից, ինչպէս յայտնի է, առաջին դերը խաղացին մատնողութեան գործում պատերազմը յայտնվելուց անմիջապէս:

Իսկ եւ, վերջացնելով նախախ ակամայ ստիպված եւ հետեւալ եզրակացութիւն անել՝ որ շատ դժուար կը լինի այսուհետև պատերազմից յետոյ կրկին այդ ծովեզրայ քաղաքները, մանաւանդ Սուխումը և Օլմ-

չիրը, շուտով առաջուան բարեկարգ վեճակի մէջ տեսնել, եթէ տէրութիւնը այդ արեւադեմի մեծագոյն մասը չը փոխադրէ հեապհեա Ռուսաստանի խորքը, որտեղ որ կարելի է յուսալ նրանք շուտով մատուցապէս փոքր ինչ կարող են լուսաւորվել և ժամանակով պիտանի մարդիկ դառնալ, իսկ նրանց տեղը հրաւիրել օրինաւոր կերպով կրկին մշակելու, արդիւնաւորելու համար ուրիշ աշխատութիւն տիրող ազգութիւններից գաղթականութիւն: Արովհետև մի ժողովուրդ, որ այդ լեռնաբնակ արեւադեմից է բաղկացած, նա երբեք իր նախապաշարմունքներից չէ կարող դուրս գալ, նա ընդունակ չէ կեանքի լաւ կողմերը բնութեւնը: Մի ժողովուրդ, կրկնում եմ, որ մինչև այժմ ոչ հողի մշակութիւնը գիտէ, ոչ անտառական կեանք է ծանաչում, ոչ խաշարածութիւն և ոչ վաճառականութիւն գիտէ, — ազգաւորում նրանից շատ և շատ դժուար կը լինի օգուտ սպասել:

Թիֆլիս 1877

Մ. Միքայիլեանց

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

Յունիսի 19-ին

Յունիսի 19-ին առաւօտեան ժամը 8-ին երբ ես անցնում էի Գօրու կիցաւա և դրեթէ քանդուելու մօտիկ փողոցով, յանկարծ լսեցի թէ նոյն օրը լինելու է հայոց երկուս ուսումնարանաց քննութիւնը: Փաստը Առաւօտաց տապի ես ինձ ու ինձ. գտնէ մի տարուայ ընկալեցում հաղիւ թէ կարողանում եմ մի ազգային երեսթով գրավել: Ինչ և ինչ շատապով բայց ես ուղղեցի դէպի ուսումնարանը: Քննութեանը ներկայ էին թեմ. վերապետը պ. Տէր-Յովհաննիսեանը, հոգաբարձու, տեղացի քահանայները, որոնք հրաւիրուած էին առանձին հրաւիրանաց տնտեսակներով և ուսանողաց ծնողներից զբաղեցնելու: Ես իբրեւ անաշու յոգաւածողի պարտական եմ աւել և դրել այն, ինչ որ տեսաւ և ինչ գաղափար որ կազմեցի թէ ուսումնարանի դաստուաւաց և թէ նոյն ցոյց տուած առաջադիւծութեան վերաբերութեամբ կրօնը, հայոց լեզուն և նկատագրական ուսումը, որից դասատու է պ. Բ. Երմազանեանը, ուսանողները, մանաւանդ օրիորդները, այնքան բաւարար և այնքան մարդու լեզուով էին պատմում, այնպէս հաւանալով էին լուծում նախադասութիւններ թէ արտաբանապէս և թէ բերականապէս, որ աւելի ողջանէ չէր կարելի: Նկատողական ուսման արժանաւորութիւն էլ նորանում էր կայանում, որ ուսուցիչը ուղադրութիւն էր դարձրել վերջում աւարկալի կամ կենդանու ոչ այնքան արտաբան, որքան նրա ներքին կողմի վրա խօսքս արդարացնելու համար ես առաջ կը բերեմ այն փաստը, որ Թիֆլիսի ուսուցիչներից մէկը Սիմէօն Աղաջանեանը, արտասանեց հետեւեալը. «չը նայելով որ Թիֆլիսի երեխայքը ուսումնարան մտնելու օրից արդէն խօսում են իրանց մայրենի լեզուով, այնու ամենայնիւ ողջաւելի պարզ, մաքուր և ազատ են խօսում քան նոյնքան: Այլ կա եւ բերում նոյն լուծ թեմ. վերապետի հնորակութիւնը, որ յայտնեց վերջին չեալ ուսուցչին: Վերջապէս վկայ եմ բերում և հանդիսականներին, որոնք այժմ ես խօսում եմ նոյն առարկաների գերազանցութեան վրա: Ռուսաց լեզուից, որից դասատու է Եղիսաբեթ Աբրահամեանը, թէ ուսանողները բաւական լաւ էին պատասխանում, բայց և այնպէս այնքան չուտ էր անցել որ մանկավարժական կանոններին նայելով շուտով կարելի է նորանում Պատեւ երեխայի ընդունակութեանը: Նկատելի էր նայալէս և այն սխալ ընթացքը, որ ուսուցչուհին մեծ ուղադրութիւն էր դարձրել ոչ այնքան յօդուածների թարգմանութեան կամ պատմութեան վրա, այսինքն երեխայից մօրի զարգացման վրա, որքան անգիր առած ոտանաւորների վրա: Վատ էր լինի, եթէ նա փոխանակ ուսանողներին ծանոթութեանը: Այնքան չոր ու ցամաք ոտանաւորներով, պարապել մի փոքր քեւրականութեամբ: Եւ սա կարելի բան էր, որովհետև հայոց լեզուից նորա արդէն այդ բանը անցել էին այս տարի: Անկարելի է չասել այն անմիջական և գրեթէ բոլորովին հակառակ երեսթով, որ ինձ բողբովին դարձեցից, այն է որ օրիորդները բաժանուած էին 4 կարգի և առաւ-

ፊቱ፡፡ 1877.

ԽՄԹԱԳԻՐ — Հրատարակող ԳՐԻՖՈՐ ԱՐԾՐՈՒՆԷՒ